Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀՌՈՄԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՄՅՈՒՆԻԿԵ

Նոյեմբերի 19, 2020թ.

Մենք՝ բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարներս, հանդիպելով առցանց 2020թվականի նոյեմբերի 19-ին, տոնում ենք Բոլոնիայի հռչակագրի ստորագրումից ի վեր 21 տարիների ընթացքում արձանագրված ձեռքբերումները: Մենք հավաստում ենք մեր պարտավորությունները Եվրոպական բարձրագույն կրթության տարածքը (ԵԲԿՏ) դարձնել ավելի ներառական, նորարար, փոխկապակցված և ճկուն:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Իտալիային մեր համաժողովը նախապատրաստելու և հյուրընկալելու իր առանցքային դերակատարության համար՝ COVID-19 համավարակի մարտահրավերներին համապատասխան:

ԵԲԿՏ-ն մի բացառիկ համագործակցություն է հիմնված փոխվստահության վրա, որտեղ պետական մարմինները և բարձրագույն կրթության շահակիցները միասին աշխատում են սահմանելու ընդհանուր նպատակներ և դրանք իրականացնելու համար: Մեր մշակույթների, լեզուների և միջավայրի բազմազանության և որակի, թափանցիկության և շարժունության պահպանման ընդհանուր նվիրվածության շնորհիվ մեր բարձրագույն կրթության համակարգերն առաջարկում են ուսումնառության, ուսուցման, հետազոտության և նորարարության բացառիկ հնարավորություններ:

Մեր հասարակությունները բախվում են աննախադեպ մարտահրավերների COVID-19-ի և ամբողջ աշխարհում դրա տարածման հետևանքների պատճառով: Համավարակը ցույց տվեց, թե որքան փոխկախված ենք մենք և որքան խոցելի կարող ենք լինել: Այն ակնհայտ դարձրեց, որ մենք բոլորս մի աշխարհի մաս ենք, որտեղ հրամայականն է մարդկային միասնությունը: Մենք մեծապես գնահատում և գիտակցում ենք այս մարտահրավերներին բարձրագույն կրթության հանրության դիմակայելու ջանքերը և հավաստում ենք մեր վճռականությունը տրամադրել ներառական որակյալ բարձրագույն կրթություն, որն իրականացնում է իր բոլորը նպատակները նաև ճգնաժամի ընթացքում:

Մենք վճռական ենք, որպեսզի բարձրագույն ուսումնական հաստատությունները համագործակցեն մեր հասարակությունների հետ գլոբալ խաղաղության, ժողովրդավարական արժեքների, տեղեկատվության ազատության, առողջության և բարեկեցությանն ուղղված բազմաթիվ սպառնալիքներին դիմակայելու համար, ներառյալ համավարակի արդյունքում առաջացած կամ սաստկացած սպառնալիքները: Մենք պարտավորվում ենք շարունակել և խթանել կրթության ոլորտում մեր ներդրումները՝ ներկա

ճգնաժամի պայմաններում ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ֆինանսավորումը, հետճգնաժամային իրավիճակի վերականգնման, և, ընդհանուր առմամբ, մշակելու լուծումներ կանաչ, կայուն և դիմացկուն տնտեսությունների և հասարակությունների համար:

Մենք պարտավորվում ենք հաղթահարել սոցիալական անհավասարությունը, որը դեռևս սահմանափակում է, որպեսզի ԵԲԿՏ-ն լինի լիովին ներառական: Թվայնացումը թույլ է տվել, որպեսզի մեր համակարգերի մեծ մասը շարունակեն գործել COVID-19 համավարակի ընթացքում՝ չնայած թվային միջոցների ակտիվացված օգտագործումն որոշակի սահմանափակումներ է ի հայտ բերել: Բարձրագույն կրթությունը, իր տրանսազգային ու միջազգային համագործակցության և հետազոտության ամրապնդված փորձով, պետք է առաջնային դերակատարություն ունենա՝ ուսումնասիրելու և խորհուրդ տալու, թե ինչպես լուծել և հաղթահարել այդ սահմանափակումները:

Մենք վճռականորեն և լավատեսորեն ենք նայում դեպի 2030 թվականը՝ համոզված լինելով, որ մեզ կհաջողվի խթանել ավելի արդյունավետ համագործակցություն և սերտ երկխոսություն մեր երկրների, բարձրագույն կրթության համակարգերի և հաստատությունների և բարձրագույն կրթության ավելի ընդգրկուն հանության հետ:

Մենք ողջունում ենք Սան Մարինոյին՝ որպես ԵԲԿՏ նոր անդամ: Սան Մարինոյին աջակցություն կցուցաբերվի համաձայնեցված ճանապարհային քարտեզով իր ստանձնած պարտավորությունների իրականացման համար:

<u>ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ</u>

Մենք պատկերացնում ենք, որ ԵԲԿՏ-ն մի տարածք է, որտեղ ուսանողները, անձնակազմը և շրջանավարտները կարող են **ազատ տեղաշարժվել**՝ սովորելու, դասավանդելու և հետազոտություն կատարելու նպատակով: **ԵԲԿՏ-ի մեր տեսլականը լիարժեք կհարգի բարձրագույն կրթության և ժողովրդավարության հիմնարար արժեքները և օրենքի գերակայությունը**: Այն կխրախուսի ստեղծագործականությունը, քննական մտածողությունը, գիտելիքների ազատ շրջանառությունը և կընդլայնի տեխնոլոգիական զարգացման շնորհիվ առաջարկվող հնարավորությունները հետազոտահեն ուսումնառության և ուսուցման համար: Այն կապահովի, որ մեր բարձրագույն կրթության համակարգերը բոլոր սովորողներին առաջարկեն հնարավորությունների հավասարություն՝ իրենց ներուժին և ձգտումներին համապատասխան: Մենք գիտակցում ենք, որ դրա իրականացման համար անհրաժեշտ է որդեգրել քաղաքականություն և ազգային շրջանակներում ներդնել միջոցներ, որոնց մի մասը դուրս կգա բարձրագույն կրթության համակարգերից և կհանգեցնի ազգային տնտեսական,

ֆինանսական և սոցիալական ավելի ընդլայնված ռազմավարությունների համապատասխանեցման:

Մեր տեսլականին հասնելու համար պարտավորվում ենք կառուցել ներառական, նորարար և փոխկապակցված ԵԲԿՏ մինչև 2030 թվականը, որն ի վիճակի կլինի հիմք հանդիսանալ կայուն, միասնական և խաղաղ Եվրոպայի համար.

- **Ներառական**, քանի որ յուրաքանչյուր սովորողի համար բարձրագույն կրթությունը կլինի հավասարապես հասանելի և կտրվի լիարժեք աջակցություն՝ իր ուսումնառությունը և վերապատրաստումը ավարտելու համար,
- **Նորարար**, քանի որ կներկայացվի հետազոտության հետ սերտորեն փոխկապակցված, նոր և ավելի լավ թիրախավորված ուսումնառության, ուսուցման և գնահատման մեթոդներ և փորձ,
- **Փոխկապակցված**, քանի որ մեր ընդհանուր շրջանակներն ու գործիքակազմը կշարունակեն նպաստել և զարգացնել միջազգային համագործակցությունն ու բարեփոխումները, գիտելիքների փոխանակումը, անձնակազմի և ուսանողների շարժունությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները ունեն բավարար ներուժ իրականացնելու փոփոխություններ՝ բարելավելով ուսանողների և հասարակության գիտելիքները, հմտություններն ու կարողականությունները՝ նպաստելով կայունության, շրջակա միջավայրի պաշտպանության և այլ կարևոր նպատակների իրականացմանը: Դրանք պետք է պատրաստեն սովորողներ, ովքեր կդառնան **ակտիվ, քննադատող և պատասխանատու քաղաքացիներ**, և պետք է առաջարկեն ցկյանս ուսումնառության հնարավորություններ՝ սովորողների սոցիալական դերը խթանելու համար:

Բարձրագույն կրթությունը **մինչև 2030 թվականը Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրականացման** հիմնական դերակատարն է: Մենք պարտավորվում ենք աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին կրթական, հետազոտական և նորարարական կարողականությունները այս գլոբալ հիմնարար նպատակներին համապատասխանեցնելու գործում և ռեսուրսներ ներդնել՝ որպեսզի բարձրագույն կրթության ազգային համակարգերը ապահովեն **ԿԶՆ-երի** իրականացումը: Կլիմայական չեզոքությանն անցնելը բոլորիս համար էական է, և սովորողները պետք է պատրաստ լինեն նոր «կանաչ» աշխատանքների և գործունեության: Նրանց պետք է առաջարկվեն հմտությունների զարգացման և կատարելագործման հնարավորություններ ցկյանս ուսումնառության հեռանկարում՝ թույլ տալով զարգացնել նոր տեխնոլոգիաների և մոտեցումների կիրառումը:

Որակյալ կրթությունը կշարունակի մնալ ԵԲԿՏ-ի հիմնական առանձնահատկությունը: **Ակադեմիական և գիտական բարեվարքության** կուռ մշակույթն, որը արգելափակում է

ակադեմիական կեղծարարության և գիտական ճշմարտության խեղաթյուրման բոլոր ձևերը, կպաշտպանվի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և պետական մարմինների կողմից:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մենք հավաստում ենք մեր պարտավորությունները **ամբողջ ԵԲԿՏ-ում խթանել և պաշտպանել ընդհանուր հիմնարար արժեքներն՝ արդյունավետ քաղաքական երկխոսության և համագործակցության միջոցով՝** որպես որակյալ ուսումնառության, ուսուցման և հետազոտության, ինչպես նաև ժողովրդավարական հասարակությունների համար անհրաժեշտ հենք: Մենք պարտավորվում ենք պահպանել բուհական ինքնավարությունը, ակադեմիական ազատությունը և բարեվարքությունը, ուսանողների և անձնակազմի մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը, և հանրային պատասխանատվությունը բարձրագույն կրթության և վերջինիս համար:

Մենք խնդրում ենք Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին (ԲԳՀԽ) մշակել ԵԲԿՏ-ի հիմնարար արժեքների բարելավման մի **շրջանակ**, որը կխթանի ինքնախոհացումը, կառուցողական երկխոսությունը և գործընկերային ուսումնառությունն ազգային մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների միջև՝ միևնույն ժամանակ հնարավոր դարձնելով գնահատել, թե որքանով են վերջիններս պահպանվում և ներդրվում մեր համակարգերում: Մենք ընդունում ենք **ակադեմիական ազատության սահմանումը**՝ որպես ակադեմիական անձնակազմի և ուսանողների ազատություն՝ հետազոտության, ուսուցման, ուսումնառության և հասարակության մեջ և վերջինիս հետ հաղորդակցության մեջ ներգրավվելու իրավունք՝ առանց միջամտության և ճնշման վախի (**Հավելված I**):

Մենք հավաստում ենք մեր պարտավորությունը կրթության և հետազոտության մեջ խթանել էթիկան, թափանցիկությունը և բարեվարքությունը և նշում, որ Եվրոպայի խորհրդի «Էթիկան, թափանցիկությունը և բարեվարքությունը կրթության մեջ» (ETINED) պլատֆորմը համագործակցության հնարավություն է առաջարկում ԵԲԿՏ-ի բոլոր անդամներին, խորհրդատվական անդամներին և գործընկերներին այս նպատակին հասնելու համար:

ԱՊԱԳԱՅԻ ԿԵՐՏՈՒՄԸ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵԲԿՏ

Սոցիալապես ներառական բարձրագույն կրթությունը կմնա ԵԲԿՏ-ի հենքը և կպահանջի հնարավորությունների և աջակցության տրամադրում հասարակության բոլոր շերտերի անհատների հավասար ներգրավման համար: Սոցիալ-տնտեսական, մասնագիտական, մշակութային և կրթական տարբեր խավերից եկող սովորողները պետք է ունենան հնարավորություն և գործիքներ՝ կյանքի ցանկացած պահի փնտրելու և օգտվելու իրենց համար առավել օգտակար կրթության տարբերակներից:

Մենք պարտավորվում ենք ամրապնդել սոցիալական ներառականությունը և խթանել որակյալ կրթությունը՝ ամբողջությամբ օգտագործելով թվայնացման ընձեռած նոր հնարավորությունները: Չնայած մեր հասարակությունները գնալով ավելի են ապավինում նորարարական տեխնոլոգիաներին, ներառյալ արհեստական բանականությանը՝ մենք պետք է ապահովենք, որպեսզի դրանք պահպանեն էթիկական չափանիշները և մարդու իրավունքները և խթանեն ներառականությունը: Մենք գիտակցում ենք, որ թվայնացումը դա «մեկ լուծում չէ բոլորի համար», և խնդրում ենք ԲԳՀԽ-ին առաջարկել այնպիսի ուղիներ, որոնց միջոցով բոլոր սովորողները կարող են օգտվել նոր տեխնոլոգիաներից:

Մենք ընդունում ենք **«ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղվածությունն ամրապնդելու սկզբունքներն ու ուղեցույցները» (Հավելված II)**՝ հիմնված սոցիալական ուղվածության ընդլայնված ըմբռնման վրա և պարտավորվում ենք դրանք իրականացնել մեր համակարգերում: Մենք կներգրավվենք քաղաքական լայնածավալ երկխոսության մեջ՝ սկզբունքներն ու ուղեցույցներն ազգային մակարդակում ամբողջությամբ իրականացնելու համար: Մենք կաջակցենք բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ դրանք իրենց բուհական մշակույթում և հիմնական առաքելության մեջ ինտեգրելու գործում, ինչպիսիք են ուսումնառությունը և ուսուցումը, հետազոտությունը և նորարարությունը, գիտելիքի շրջանառությունը և տարածումը, բուհական կառավարումը և ղեկավարումը: Մենք առաջարկում ենք ԲԳՀԽ-ին 2024թ.-ին մեզ զեկուցել ձեռնարկված քայլերի և դրանց հետ կապված մոնիթորինգի միջոցառումների մասին՝ ապացուցահեն հետևողականությունն ապահովելու համար:

Մենք գիտակցում ենք ուսանողների իրավունքների պաշտպանության կարևորությունն օրենսդրության միջոցով ու պարտավորվում ենք զարգացնել և աջակցել նրանց մեր ազգային համակարգերում միջոցառումների և կառույցների միջոցով, ինչպիսիք են ուսանողների օմբուդսմենները կամ նմանատիպ լուծումները, որոնք արդեն գոյություն ունեն ԵԲԿՏ-ի շատ երկրներում: Մենք պարտավորվում ենք հնարավորություն ընձեռել մեր երկրների և բարձրագույն կրթության համակարգերի շրջանակներում նման միջոցների իրականացմանը

և խրախուսելու ենք համագործակցությունը Բարձրագույն կրթության օմբուդսմենների եվրոպական ցանցի (ENOHE) շրջանակներում:

ՆՈՐԱՐԱՐ ԵԲԿՏ

Մենք աջակցում ենք բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ **մեր հասարակությունների առջև ծառացած մարտահրավերների** համար լուծումներ գտնելու արդյունավետ որոնման գործում: **Սոցիալական, մարդկային և ստեղծագործ գիտություններն ու արվեստները** պետք է շարունակեն իրենց կարևոր դերն ունենալ՝ մեր կյանքին խորություն և հնարավորությ

ուն տալով հասկանալ և գործել փոփոխվող աշխարհում: Մեր բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է համագործակցեն իրենց համայնքների հետ՝ փոխշահավետ և սոցիալապես պատասխանատու համատեղ գործողություններ ձեռնարկելու համար:

Մարտահրավերներին դիմակայելու և նոր տասնամյակի ընձեռած հնարավորությունները զարգացնելու համար կպահանջվի **գիտելիքների, հմտությունների և կարողականությունների արագ արդիականացում**: Բարձրագույն ուսումնական հաստատությունները կշարունակեն դիվերսիֆիկացնել իրենց ուսումնառության առաջարկը և նորարարություն հաղորդել մատուցվող բովանդակությանը և ձևերին, որպեսզի արձագանքեն նորարարական և քննական մտածողության, հուզական բանականության, առաջնորդության, թիմային աշխատանքի և խնդիրների լուծման ունակությունների, ինչպես նաև ձեռնարկատիրական աշխարհայացքի աճող կարիքներին:

Ճկուն և բաց ուսումնառության ուղիները, որոնք Բոլոնիայի գործընթացի սկզբնական ոգեշնչման մի մասն են, **ուսանողակենտրոն ուսումնառության** կարևոր ասպեկտներ են և մեծ պահանջարկ ունեն մեր հասարակություններում: Լիարժեք կրթական ծրագրերից բացի, բարձրագույն ուսումնական հաստատություններից շատերն առաջարկում կամ նախատեսում են առաջարկել **ուսումնառության ավելի փոքր չափաբաժիններ**, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս զարգացնել կամ թարմացնել իրենց մշակութային, մասնագիտական և համընդհանուր հմտություններն ու կարողականությունները կյանքի տարբեր փուլերում: Մենք խնդրում ենք ԲԳՀԽ-ին ուսումնասիրել, թե ինչպես և որքանով **այս ավելի փոքր, ճկուն չափաբաժինները, ներառյալ միկրոորակավումներին հանգեցնողները** կարող են սահմանվել, մշակվել, ներդրվել և ճանաչվել հաստատությունների կողմից՝ օգտագործելով ԵԲԿՏ-ի գործիքակազմը:

Մենք ընդունում ենք **«Ազգային մարմիններին ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության ուսումնառության և ուսուցման խթանման վերաբերյալ առաջարկություններ»-ը**

(Հավելված III) և պարտավորվում ենք հետևել դրանց՝ աջակցելով բարձրագույն ուսումնական հաստատություններին հետագայում էլ իրականացնել ուսանողահեն ուսումնառություն և ուսուցում: Առաջարկությունները ներառում են աջակցության ընդլայնում բոլոր սովորողների և՝ դասավանդող, և՝ ոչ դասավանդող անձնակազմի համար: Ակադեմիական, ներառյալ կրտսեր անձնակազմը, պահանջում է կայուն աշխատանքի և կարիերայի առաջխաղացման հնարավորություններ, դասավանդման և հետազոտության հավասար գնահատական, աշխատանքային գրավիչ պայմաններ, անձնակազմի վերապատրաստման ժամանակակից հնարավորություններ և իրենց ձեռքբերումների ճանաչում: Այս բոլոր առումներով մենք խթանելու ենք ուսումնառության և ուսուցման վերաբերյալ երկխոսությունն ու համագործակցությունը մեր ազգային համակարգերում և ԵԲԿՏ-ում:

Մենք պարտավորվում ենք աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ թվային տեխնոլոգիաներն ուսումնառության, ուսուցման և գնահատման, ինչպես նաև ակադեմիական հաղորդակցության և հետազոտության մեջ օգտագործելու համար և **թվային հմտությունների և կարողականությունների զարգացմանն** ուղղված ներդրումների կատարմանը: Մենք պարտավորվում ենք զարգացնել բաց գիտությունը և կրթությունը՝ նպաստելով գիտելիքների և **բաց լիցենզավորված նյութերի** փոխանակմանը, որոնք հասանելի կլինեն բարձրագույն կրթության շահակիցներին և հնարավորություն կտան հարմարեցնել դրանք իրենց կարիքներին:

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԵԲԿՏ

Համագործակցությունն ու շարժունությունը շաղկապում են մեր համակարգերը և խթանում միջմշակութային և լեզվական կարողականությունների զարգացումը, գիտելիքների ավելի լայն շրջանակը և մեր աշխարհընկալումը: Մեր բազմազան մշակույթների և բարձրագույն կրթության համակարգերի անմիջական շփումն ու համագործակցությունն անձնակազմի և ուսանողների շարժունության միջոցով նպաստում են ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության գերազանցությանը և համապատասխանությանը՝ այն դարձնելով գրավիչ և մրցունակ համաշխարհային մասշտաբով: Մենք ընդունում ենք ֆիզիկական շարժունության կարևորությունն ու առավելություններն ուսանողների, դոկտորանտների և անձնակազմի համար: Չնայած COVID-19 համավարակի հետ կապված առկա դժվարություններին, մենք հավաստում ենք մեր նպատակն առ այն, որ **ԵԲԿՏ-ում շրջանավարտների առնվազն 20%-ը** պետք է արտերկրում ուսումնառության կամ վերապատրաստման որևէ ժամանակահատված անցած լինեն և, **այնուհետև, պարտավորվում ենք բոլոր սովորողներին հնարավորություն ընձեռել** ձեռք բերել **միջազգային և միջմշակութային կարողականություններ՝**

ուսումնական ծրագրերի միջազգայնացման միջոցով կամ իրենց ուսումնական հաստատությունների **նորարարական միջազգային միջավայրում**՝ ֆիզիկական, թվային (վիրտուալ) կամ խառը ձևաչափերով իրականացված մասնակցության միջոցով:

Թվային լուծումները կնպաստեն **տվյալների** անվտանգ, արդյունավետ և թափանցիկ **փոխանակմանը**: Անհրաժեշտ են համատեղ ջանքեր են ճանաչման, որակի ապահովման և շարժունության բարձրացման թվային լուծումների համար: Մենք հանձնարարում ենք ԲԳՀԽ-ին քարտեզագրել գոյություն ունեցող նախաձեռնությունները և գտնել նոր լուծումներ՝ թվային համակարգերի փոխգործունակության բարձրացման, ուսանողների և ինստիտուցիոնալ տվյալների փոխանակման համար՝ ամբողջովին պահպանելով գաղտնիությունն ու անվտանգությունը, ինչպես նաև հաշվի առնելով Եվրոպական ուսանողական քարտի և այլ նախաձեռնությունների փորձը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ավելի խոր համագործակցությունը համատեղ ուսուցման և հետազոտության միջոցով կօգնի լուծել վերոնշյալ խնդիրները: Մենք կփորձենք վերացնել համագործակցության խոչընդոտներն ազգային մակարդակներում և հնարավորություն ընձեռել ԵԲԿՏ-ի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին օգտվել դրանից: Եվրոպական համալսարանների նախաձեռնության շրջանակներում ձևավորված դաշինքները հանդիսանում են ավելի խոր և լայնամասշտաբ համակարգային համագործակցություն որոնելու կարևոր միջոց, որն ապագայում կարող է օգտակար լինել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից տրանսազգային ավելի սերտ համագործակցության խոչընդոտները հայտնաբերելու և հաղթահարելու համար:

<u>ԿԻՐԱՐԿՈՒՄԸ</u>

Մենք հաշվի ենք առնում **Բոլոնիայի գործընթացի կիրարկման զեկույցում** վերջին երկու տասնամյակների ընթացքում գրանցված առաջընթացի վերաբերյալ արդյունքները: Ձեռքբերումները տպավորիչ են: Այնուամենայնիվ, հավելյալ աշխատանք է պահանջվում, որպեսզի ԵԲԿՏ-ն առաջիկա տասնամյակում ունենա ամուր հիմք՝ հենարան դառնալով փոխկապակցված, նորարար և ներառական բարձրագույն կրթության համար:

Մենք ապավինում ենք «Էրասմուզ» ծրագրի շարժունության և համագործակցության այլ ծրագրերի շարունակական աջակցությանը՝ մեր ստանձնած պարտավորությունները խթանելու համար:

2018թ.-ին Փարիզի նախարարական համաժողովի ընթացքում մենք որոշեցինք հատուկ ջանքեր գործադրել ԵԲԿՏ-ի գործունեության համար անհրաժեշտ երեք **«Առանցքային պարտավորություններ»**-ի կիրարկումն ավարտին հասցնելու համար: Դրանք են՝

Որակավորումների շրջանակները և Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ԿԿՓՀ), Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան և Դիպլոմի հավելվածը, Որակի ապահովումը ըստ ԵԲԿՏ որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցների (ESG):

Մենք հավաստում ենք մեր վճռականությունը՝ առանցքային պարտավորություններն ամբողջությամբ իրականացնելու համար: Մենք հորդորում ենք ԲԳՀԽ-ին շարունակել օգտագործել **գործընկերային աջակցության մեթոդը** դրան հասնելու համար և պարտավորվում ենք շարունակական մասնակցություն ունենալ և նպաստել այս ջանքերին:

Մենք պարտավորվում ենք ավարտին հասցնել և զարգացնել **Ազգային որակավորումների շրջանակների** կիրարկումը՝ դրանք համադրելի դարձնելով **Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների համապարփակ շրջանակին (QF-EHEA)**, և խնդրում ենք ԲԳՀԽ-ին թարմացնել ինքնահավաստագրման չափանիշները՝ խորացնելով ազգային զեկույցների գործընկերային վերանայումը: Մենք լիազորում ենք **Որակավորումների շրջանակների համապատասխանության ցանցին** շարունակել իր աշխատանքը՝ նպաստելով Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի զարգացմանը (QF-EHEA) և վերջինիս համապատասխան ազգային որակավորումների շրջանակների ինքնահավաստագրմանը:

Մենք կամրապնդենք **Եվրոպայի խորհրդի/ՅՈՒՆԵՍԿՕ-ի Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի** կիրարկումը և կկիրառենք վերջինիս սկզբունքները ԵԲԿՏ-ից դուրս որակավորումների և ուսումնառության ժամանակահատվածների համար՝ օգտագործելով գնահատման ընդհանուր չափանիշներ և հաշվետվություններ՝ համագործակցելով Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի կոմիտեի և ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի հետ:

Մենք կապահովենք **ԵԲԿՏ-ի շրջանակներում ակադեմիական որակավորումների և ուսումնառության ժամանակահատվածների ավտոմատ ճանաչումը**, որպեսզի ուսանողները, անձնակազմը և շրջանավարտները կարողանան ազատ տեղաշարժվել՝ սովորելու, դասավանդելու և հետազոտություն կատարելու համար: Մենք կկատարենք անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները՝ ավտոմատ ճանաչումը համակարգային մակարդակում երաշխավորելու ԵԲԿՏ-ի այն երկրներում տրամադրվող որակավորումների համար, որտեղ որակի ապահովումը գործում է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG) համաձայն, որտեղ հաստատված է լիարժեք գործող ազգային որակավորումների շրջանակ: Մենք նաև խրախուսում ենք թվային հավաստագրման և հաղորդակցության, ինչպիսին է բլոքչեյնը, անվտանգ և համաձայնեցված համակարգերի կիրառումը, ինչպես նաև Արտաքին որակի ապահովման արդյունքների տվյալների շտեմարանի (DEQAR) հետագա զարգացումը՝ ավտոմատ ճանաչումը հեշտացնելու համար:

Մենք պարտավորվում ենք վերանայել օրենսդրությունը, կանոնակարգերը և փորձը՝ ապահովելու փախստականների, տեղահանված և փախստականների կարգավիճակ ունեցող անձանց որակավորումների արդար ճանաչումը, նույնիսկ եթե դրանք լիովին փաստաթղթավորված չեն՝ համաձայն Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի VII-րդ հոդվածի: Մենք ողջունում ենք **Փախստականների որակավորումների եվրոպական անձնագիրը** և կաջակցենք դրա հետագա կիրառման ընդլայնմանը մեր համակարգերում:

Մենք ընդունում ենք **որակի ապահովման համակարգերի** առաջընթացը՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG) համապատասխան, և պարտավորվում ենք վերացնել մնացած խոչընդոտները, ներառյալ Եվրոպական որակի ապահովման ռեգիստրում գրանցված գործակալությունների միջսահմանային գործունեությունը, ինչպես նաև Համատեղ ծրագրերի որակի ապահովման եվրոպական մոտեցման կիրարկումը: Մենք պարտավորվում ենք խթանել, որպեսզի ԵԲԿՏ-ում տրանսազգային բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներն իրականացվեն՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG) համապատասխան: Հաշվի առնելով ուսումնառության ուղիների ճկունության և բացության, ուսման ավելի փոքր չափաբաժինների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ավելի մեծ սիներգիայի անհրաժեշտությունը՝ մենք խրախուսում ենք **Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչների և ուղեցույցների (ESG) կատարելագործմանը միտված օգտագործումը՝ բարձրագույն կրթության ոլորտում նորարարություններին և դրանց որակի ապահովմանն աջակցելու համար**:

Մենք պարտավորվում ենք ամրապնդել **Եվրոպական հետազոտական տարածքի** հետ համագործակցությունը և կոչ ենք անում ԲԳՀԽ-ին սերտորեն համագործակցել Եվրոպական հետազոտությունների տարածքի և նորարարության կոմիտեի (ERAC) հետ՝ նպաստելու կրթության և հետազոտության և նորարարության քաղաքականության միջև սիներգիային և համապատասխանեցմանը: Մասնավորապես, ուշադրության կենտրոնում կլինեն հետազոտահեն ուսումնառության զարգացումը, ակադեմիական և գիտական ազատության երաշխավորումը և Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակների իրականացումը:

Մենք պարտավորվում ենք կառուցել **ավելի սերտորեն փոխկապված և կայուն բարձրագույն կրթության հանրություն**, որը խթանում է ներառականությունը, հաղորդակցությունը, համագործակցությունը և միասնությունը, որոնք էական են **ապագա ԵԲԿՏ-ի արդիականության և գերազանցության** համար: Դա իրագործելու համար մենք պարտավորվում ենք մեր ազգային բարձրագույն կրթության հանրությանը տեղեկացված պահել և ներգրավել ԵԲԿՏ-ի զարգացումների մեջ, ինչպես նաև սերտորեն համագործակցել ուսանողների և բարձրագույն կրթության ասոցիացիաների և ցանցերի հետ ազգային

բարեփոխումների մշակման և իրականացման համար: Մենք գիտակցում ենք ԵԲԿՏ-ի ապագայի առաջնահերթություններն որոշելու համար իրականացվող ընդգրկուն խորհրդատվությունների կարևորությունը և խնդրում ենք ԲԳՀԽ-ին կազմակերպել ԵԲԿՏ միջոցառումներ, ինչպիսիք են **տրանսազգային սեմինարները, աշխատաժողովները և լսումները**՝ ներառելով բարձրագույն կրթության համայնքի ավելի լայն շերտեր (ուսանողներ, ակադիմական անձնակազմ, արտաքին շահակիցներ և այլն)՝ քննարկելու ներկա և ապագա նպատակները և ուսումնասիրելու դրանց լուծման համատեղ ուղիները:

ԵԲԿՏ-Ն ԳԼՈԲԱԼ ՄԱՍՇՏԲՈՎ

Չնայած COVID-19 համավարակն անհնար դարձրեց Գլոբալ քաղաքականության ֆորումի անցկացումը ինչպես նախատեսված էր, մենք ուրախ ենք, որ մեր համաժողովը ներառում է գլոբալ նստաշրջան: Մենք վերահաստատում ենք բարձրագույն կրթության արժեքների, քաղաքականության և բարեփոխումների վերաբերյալ միջազգային երկխոսությունը՝ հիմնվելով ԵԲԿՏ-ի, ինչպես նաև աշխարհի այլ տարածաշրջանների փորձի վրա, և խնդրում ենք ԲԳՀԽ-ին առաջիկա աշխատանքային շրջանում զարգացնել և ամրապնդել Գլոբալ երկխոսությունը:

Մենք ողջունում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գլոբալ կոնվենցիայի ընդունումը և պարտավորվում ենք այն արագ վավերացնել որակավորումների և ԵԲԿՏ-ից դուրս ձեռք բերված ուսման ժամանակահատվածների արդար ճանաչմանը նպաստելու համար՝ օգտագործելով Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի համապատասխան գնահատման չափանիշներն ու հաշվետվությունները:

Մենք բարձր ենք գնահատում բազմազանության, սոցիալական և քաղաքացիական պատասխանատվության գլոբալ արժեքների ներառումը վերջերս թարմացված Համալսարանների մեծ խարտիայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք կոչ ենք անում ԲԳՀԽ-ին անդրադառնալ հաջորդ տասնամյակի համար սահմանված գործողություններին և առաջնահերթություններին՝ մինչև 2030 թվականը ստեղծելով այնպիսի Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, որը լիովին կհամապատասխանի մեր տեսլականին և առաջադրված նպատակներին: 2024թ.-ին կայանալիք նախարարական համաժողովի համար մենք լիազորում ենք ԲԳՀԽ-ին պատրաստել կիրարկման

հաշվետվություն՝ մեր կողմից համաձայնեցված պարտավորությունների առաջընթացը գնահատելու համար:

Մենք երախտագիտությամբ ընդունում ենք Ալբանիայի առաջարկը՝ հյուրընկալել ԵԲԿՏ-ի հաջորդ նախարարական համաժողովը և Գլոբալ քաղաքականության ֆորումը, որոնք տեղի կունենան 2024թ.-ին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հռոմի նախարարական կոմյունիկեի Հավելված 1՝ «Ակադեմիական ազատության վերաբերյալ հայտարարություն»

- Հռոմի նախարարական կոմյունիկեի Հավելված 2՝ «ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղվածությունն ամրապնդելու սկզբունքներն ու ուղեցույցները»

- Հռոմի նախարարական կոմյունիկեի Հավելված 3՝ «Ազգային մարմիններին ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության ուսումնառության և ուսուցման խթանման վերաբերյալ առաջարկություններ»